**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**«ԳՈՐԻՍԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ**
**ՏՆՕՐԵՆ**

Ք. Գորիս, Գ.Տաթևացի 31, էլ. Փոստ՝ info@gorismc.am
☏ (0284) 2-21-52

N 349

«9» օգոստոս 2024թ.

**ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

**ՊԱՐՈՆ Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆԻՆ**

***Հարգելի պարոն Ավանեսյան.***

<Գորիսի բժշկական կենտրոն> ՓԲ ընկերությունը որոշել է <Ագաստ> ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 30.01.2024 թվականին <ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/2/5> ծածկագրով կնքված պայմանագիրը՝ 8,21 -րդ չափաբաժինների մասով չմատակարարելու, հուլիսի 31 -ին միակողմանի լուծելու պատճառով.

| Մասնակցի | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| անվանումը | ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը | Գործունեության հասցեն | Պայմաններին չբավարարելու իրավական հիմքը | | | Ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը |
| | | | Խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը | Խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը | Որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից | |
| <Ագաստ> ՍՊԸ | ՀՎՀՀ 00435781 | ՀՀ ք.Երևան, Տ.Պետրոսյան 31/1 | | Խախտել է պայմանագրով նախատեսված 2.1.1 և 2.1.7.1 պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը | | 09.08.2024թ. <ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/2/5> |

**ՏՆՕՐԵՆ՝ Գ.ՄԱՇՈՒՐՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**«ԳՈՐԻՍԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ**

Ք. Գորիս, Գ.Տաթևացի 31, Էլ. Փոստ՝ info@gorismc.am
(0284) 2-21-52

N____________

«9» օգոստոս 2024թ.

## ՀՐԱՄԱՆ 331

## <ԱԳԱՍՏ> ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <Գնումների մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <ա> պարբերության և 2-րդ մասի պահանջները, ինչպես նաև այն, որ <Ագաստ> ՍՊԸ-ն խախտել է <Գորիսի բժշկական կենտրոն> ՓԲԸ-ի և <Ագաստ> ՍՊԸ-ի միջև 30.01.2024թվականին կնքված <ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/2/5> ծածկագրով գնման պայմանագրով ստանձնած դեղորայքի ՝ չափաբաժիններ 8,21 (Ասկորբինաթթու 50մգ/2մլ, իզոֆլուրան 250մլ) մատակարարման պարտավորությունը, որը հանգեցրել է պայմանագրի միակողմանի լուծմանը.

ՈՐՈՇԵՑԻ՝

<Գորիսի բժշկական կենտրոն> ՓԲԸ-ի հետ 30.01.2024 թվականին կնքված <ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/2/5> ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ Պայմանագիր) կողմ <Ագաստ> ՍՊԸ (ՀՎՀՀ՝ 00435781, գործունեության հասցեն՝ ք.Երևան, Տ.Պետրոսյան 31/1) Պայմանագրով ստանձնած պարտավորությունները 8,21 -րդ չափաբաժինների մասով խախտելու և վերջինս միակողմանի լուծելու հիմքով՝ գրավոր ուղարկել լիազորված մարմնին՝ ՀՀ Ֆինանսների նախարարությանը, վերջինիս ներառելու գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՏՆՕՐԵՆ Դ.ՄԱՇՈՒՐՅԱՆ